ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Լոռու մարզպետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ջեռուցման համակարգի շահագործման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-18/01 պայմանագրում 2018 թվականի հունվարի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:

Փոփոխության նկարագրություն՝ ՀՀ Կառավարության 28.12.2017թ. թիվ 1717-Ն որոշմամբ <<ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-18/01>> ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ և պայմանագրի 7.13 կետի համաձայն 18.01.18թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի հոդված 15-ի 6-րդ կետ:

Պատվիրատու՝ ՀՀ Լոռու մարզպետարան:

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## 2017Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ>> N ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-18/01 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

18 հունվարի 2018թ.

ք. Վանաձոր

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև՝ Գնորդ/, մի կողմից և «Տիգրանշին» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով 20 դեկտեմբերի 2017թ. կնքված N ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-18/01 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Քանի որ ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1717-Ն որոշումը, որով հաստատվել են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվող գումարները, համարել, որ Պայմանագիրն ուժի է մտնում սույն թվականի հունվարի 18-ից և հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագրում չնշված կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, գրված է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տիգրանշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Վարդանանց 17
ՀՎՀՀ 06942458
ՀՀ 2050222025971001
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ

Տ. Պողոսյան

Կ.Տ

Հավելված
18 հունվարի 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132200 | Ջեռուցման համակարգի շահագործման ծառայություններ | - | 65000 | 131000 | 458500 | 458500 | 458500 | 458500 | 458500 | 458500 | 458500 | 884200 | 1310000 | 1310000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

---------------------------
Ն. Մարգսյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տիգրանշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Վարդանանց 17
ՀՎՀՀ 06942458
ՀՀ 2050222025971001
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ

---------------------------
Տ. Պողոսյան

Կ.Տ